ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ԱԼԱՎԵՐԴԻ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ՕՁՈՒՆ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մատենագրական աղբյուրներում Օձունը հիշատակվում է սկսած 8-րդ դարից:

Ավանդույթի համաձայն՝ 1-ին դարում Թովմաս առաքյալը, գալով Օձուն, եկեղեցու տարածքում օծել է քահանաների ու եպիսկոպոսների: Օձուն անունն էլ, ասում են, որ առաջացել է հենց «օծել» բառից: Տարբեր մատենագիրների մոտ հանդիպում ենք նաև Ազուն, Օձուն, Ազու անվանումները: Իսկ մինչև 1967 թ. գյուղը կոչվել է Ուզունլար, որը թուրքերեն՝ ուզուն-երկար և լար – ճանապարհ բառերից է առաջացել: Գյուղը միջնադարում բավականին հայտնի է եղել շնորհիվ հայոց կաթողիկոս Հովհան Օձնեցի Իմաստասերի (717-728 թթ):

Օձունի տարածքը հարուստ է պատմաճարտարապետական տարբեր հուշարձաններով՝ եկեղեցիներ, վանական համալիրներ, մատուռներ, կոթողներ, մահարձաններ, խաչքարեր, ժայռափոր անձավներ, հին բնակատեղիներ, ժողովրդական ճարտարապետության նմուշներ: Քարայրներից հայտնաբերվել են բազմաթիվ հիշատակարաններ: Գյուղի կենտրոնական մասում գտնվում են Օձունի գմբեթավոր բազիլիկ եկեղեցին, կոթող-մահարձանը, միջնադարյան երկու գերեզմանոցներ (մեծաթիվ խաչքարերով և մահարձաններով), Ծիրանավոր-Խաղկավանք եկեղեցին և Հոռոմայրի վանքը:

Գյուղում առկա եկեղեցիները պատկանում են Գուգարաց թեմին: Եկեղեցիներից Օձունը գործող եկեղեցի է, ունի երգչախումբ, հոգևոր առաջնորդն զբաղվում է նաև երիտասարդների հոգևոր դաստիարակությամբ: Եկեղեցին վերջին տարիներին վերանորոգվել է:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Բնակավայրը գտնվում է Դեբեդի կիրճի ձախափնյա բարձրադիր սարավանդի վրա, Ալավերդի քաղաքից 8 կմ հարավ-արմեւմուտք: Զբաղվում են կաթնաանասնապահությամբ, կարտոֆիլաբուծությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ: Ունի երկու միջնակարգ դպրոցներ, երկու մանկապարտեզ երաժշտական դպրոց, մշակույթի տուն, գրադարան, կապի բաժանմունք, բուժ ամբուլատորիա, շրջանային հրշեջ կայան: Օձուն անունը հիշատակվում է ութերորդ դարից: Գյուղում կան բազմաթիվ պատմաճարտարապետական հուշարձաններ:

Օձունը հանրապետության մեծ գյուղերից է, իսկ Լոռու մարզի ամենամեծ գյուղը: Այն գտնվում է Երևանից 170 կմ, իսկ մարզկենտրոն Վանաձորից 50 կմ հեռավորության վրա՝ հանրապետության հյուսիսային մասում: Օձուն բնակավայրը գտնվում է Հ-35՝ Մ-6 – Օձուն - Արևաձագ – Հ 24 հանրապետական նշանակության ճանապարհի վրա, Մ-6՝ Վանաձոր (Մ-3 հատման կետ) Ալավերդի - Վրաստանի սահմանի միջպետական ավտոճանապարհից 5 կմ հեռավորության վրա: Բնակավայրի մակերեսը 7879,72 հա է, որից անտառները՝ 1893հա, գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 5404 հա, այդ թվում. Բնակավայրը գտնվում է Լոռու մարզի վարչական տարածքի մեջ: Օձուն բնակավայրի վարչական տարածքի մեջ է մտնում նաև Ամոջ գյուղը: Օձունն աչքի է ընկնում բարենպաստ մեղմ կլիմայով, որը պայմանավորված է նրա տարածքի մակերևույթի համեմատաբար ոչ մեծ բարձրությամբ՝ 1000-1100 մ ծովի մակարդակից:: Ձմռան ամենացուրտ ամիսը հունվարն է, հունվարյան միջին ջերմաստիճանը-2,00C: Ամռան ամենատաք ամիսը հուլիսն է, միջին ջերմաստիճանը 19,90C: Տարեկան միջին ջերմաստիճանը 9,30C, մթնոլորտային տեղումների միջին քանակը կազմում է 553 մմ:Օձունը Հայաստանի հնագույն բնակավայրերից է, աչքի է ընկնում

պատմական եւ ճարտարապետական հուշարձանների առատությամբ. այդ մասին են վկայում IV դարում կառուցված Ս. Աստվածածին եկեղեցին, V դարում կառուցված Ծիրանավոր Ծաղկավանք, VII դարում կառուցված Հոռոմայրի վանական համալիրը, ինչպես նաեւ գյուղի տարբեր վայրերում կառուցված եւ տեղադրված բազմաթիվ խաչքարերն ու մատուռները:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	553 մմ
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (^{0}C)	-2,00C
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (^{0}C)	19,90C

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Թումանյան
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	12կմ
2.2) մայրաքաղաքից (կմ)	170կմ
2.3) մարզկենտրոնից (կմ)	50կմ
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	50կմ
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	12կմ
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	5կմ
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	10կմ
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1000-1100կմ
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	166.59/16659.44
6.Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Ամոջ, Այգեհատ
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	+37494198474 +37499989699
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	այո
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	3053
2. Գրանցված ծնունդների քանակը	58

2.Մահացության դեպքերի քանակը	37
3.Ամուսնությունների քանակը	21
4. Ամուսնալուծությունների քանակը	-
5. Տնային տնտեսությունների թիվը	1200
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	69
7. Կենսաթոշակառուների քանակը	995
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	304

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	-
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	2
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	-
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	-
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	-
9. Մարզադպրոցների քանակը	-

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	5519,74
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	3
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	1219

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	5404.58
2. Բնակավայրերի հողեր (հա)	426.95
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	33.85
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ	47.96
5. Հատուկ նշանակության	0
6. Հատուկ պահպանվող տարածքների	28.62

7. Անտառային	1893.65
8. Ջրային	23.78
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1645
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	261
11. Խոզերի գլուխաքանակը	633
12. Գյուղատնտեսական տեխնիկա	23
12.1 տրակտորներ (քանակը)	20
12.2 կոմբայններ (քանակը)	3
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	1200

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	23
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	29.4
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	2
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	42
6.2 Էքսկավատորների քանակը	4
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	8
6.4 Գրեյդերների քանակը	1
6.5 Աղբատար մեքենաների քանակը	1
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	-
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	-
6.9 Ավտոաշտարակների քանակը	-
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	11
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, որից՝	7
1.1 համայնքային ծառայողներ	4
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	3

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները
Ներհամայնքային փողոցների անբարեկարգ վիճակ:	Ներհամայնքային փողոցների ասֆալտապատում:
Կոյուղագծերի բացակայություն:	Կոյուղագծերի կառուցում:
Սելավատարերի կապիտալ նորոգման անհրաժեշտություն:	Սելավատարերի կապիտալ նորոգում: